Հայ Յեղափոխական Դաշնակցություն

1890

COVID-19

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում հայտարարված է արտակարգ դրություն, սակայն առկա են միայն դրա որոշ տարրեր: Ակնհայտ է, որ վիճակի վատթարացմանը զուգահեռ կառավարությունը ստիպված է լինելու ավելի ու ավելի խստացնել պայմանները: Սակայն թե միջազգային փորձը, թե հակաճգնաժամային կառավարման սկզբունքները թելադրում են խնդրի արմատական լուծում և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, որոնք ավելի արդյունավետ կլինեն այսօր, քան բոլոր ուղղություններով իրավիճակի սրացման արդյունքում: Հապաղումը ոչ միայն հղի է համավարակի հետագա տարածմամբ, այլ նաև ժամանակի և ռեսուրսների անվերադարձ կորստով:

1. Անհրաժեշտ է հենց այսօր դադարեցնել բոլոր տեսակի ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությունը, բացառությամբ՝ կենսապահովման օբյեկտների:

2. Սահմանափակել բոլոր ուղևորատար տրանսպորտային ընկերությունների գործունեությունը, այդ թվում՝ մետրոյի և տաքսիների: Սահմանել որոշակի ուղերթներ, որոնք կիրականացվեն որոշակի ժամերի, խիստ հսկողության ներքո:

3. Ձևավորել վերահսկելի մեկուսացումների մի քանի մակարդակ՝ ըստ բնակավայրերի:

4. Սահմանել բացառության ժամեր՝ տարեցների խնամքի, խանութների և դեղատների այցելության համար: Կենսապահովման կազմակերպությունների աշխատակիցների տեղափոխումն աշխատավայր և աշխատավայրից տուն պետք է ապահովվի ձեռնարկությունների կամ պետության միջոցով:

5. Բոլոր աշխատող ձեռնարկությունների աշխատակիցների համար ապահովել իրավիճակից բխող պարտադիր սանիտարահիգիենիկ պահանջներ, որոնց խախտումը պետք է հանգեցնի վարչական կամ նույնիսկ քրեական պատասխանատվության:

6. Բոլոր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է տեղեկանքները և ծառայությունները տրամադրեն առցանց:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

7. Օրենքով սահմանված ժամկետների բացթողումը համարել հարգելի արտակարգ դրության ողջ ժամկետի տևողությամբ:

8. Բանկերը և վարկային կազմակերպությունները տեղափոխել արտակարգ աշխատանքային ռեժիմի՝ առանց քաղաքացիների այցելության, սակայն ապահովելով հերթապահ խմբերի աշխատանքը և դրամային զանգվածի և քարտային համակարգի անխափան գործունեությունը:

9. Ազատ տեղաշարժի սահմանափակումները չեն տարածվելու հատուկ ծառայությունների մեքենաների վրա:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Բոլոր պետական կառավարման մարմիններում ձևավորել արտակարգ դրության հանձնաժողովներ: Մնացած աշխատակիցները պարտավոր են աշխատել տնից:

2. Պարետատան ենթակայության տակ ձևավորել տարածաշրջանային հակաճգնաժամային կառավարման կենտրոններ՝ կառավարման փորձառություն ունեցող հմուտ կառավարիչների մասնակցությամբ:

3. Պետական կառավարումը իրականացնել բացառիկ խնայող ռեժիմում՝

- դադարեցնել այն ծրագրերի ֆինանսավորումը, որոնք այս իրավիճակում հրատապ չեն,
- դադարեցնել գնումների մրցույթների իրականացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է արտակարգ դրության պայմանների ապահովման համար,
- դադարեցնել բոլոր տեսակի պարգևատրումները բոլոր մակարդակների պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- արգելել թե պետական մարմիններում, թե ոչ պետական կազմակերպություններում բոլոր տեսակի գործուղումները, բացառությամբ պարետի հատուկ թույլտվության, եթե դա բխում է արտակարգ դրության իրավիճակից,
- դադարեցնել հարկային ստուգումները և սույն ժամանակաշրջանում պահանջվող հաշվետվությունների համար սահմանել այլ ժամանակաշրջան:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4. Դադարեցնել պետական բյուջեից մասհանումները կուտակային կենսաթոշակային հիմնադրամներին: Նախաձեռնել գործող համակարգի վերանայումը, կուտակված միջոցները վերադարձնել դրանք վճարած քաղաքացիներին և պետությանը: Սահմանել քաղաքացիների հաշիվներին դրանք մուտքագրելու և տնօրինելու ժամանակացույցը:

5. Դադարեցնել այն ծրագրերը, որոնք ավելի են վատացնում տնտեսվարողների և քաղաքացիների վիճակը, միաժամանակ նպաստելով պետական բյուջեի հաշվին ֆինանսական համակարգի հարստացմանը, ինչպես, օրինակ՝ չհիմնավորված վարկավորման խթանումը:

6. Պետական բյուջեի ծախսային քաղաքականությունը վերակառուցել՝ առաջնահերթություն համարելով առողջապահական ծրագրերը, ինչպես նաև համավարակի կանխարգելման, բուժման և հեռավար աշխատանքների կատարման ու ծառայությունների մատուցման տեխոլոգիական նորար լուծումներին ֆինանսական աջակցության ցուցաբերումը

7. Ձևավորել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրված վարկերի սպասարկման՝ ի շահ վարկառուների հետաձգման միասնական գործելաոճ:

8. Վերահսկել տարադրամային հոսքերը: Արգելել տարադրամի փոխանցումը կամ տեղափոխումը ցանկացած եղանակով՝ բացառությամբ ռազմավարական նշանակության ապրանքների գնման նպատակով փոխանցումների:

9. Տարադրամային պաշարները չվատնել դրամի փոխարժեքի արհեստական պահպանման վրա՝ վտանգելով հետագայում ռազմավարական նշանակության ապրանքների ձեռք բերման հնարավորությունը:

10. Արգելել օնլայն շահումով խաղերի գործունեությունը և դրանց բոլոր տեսակի գովազդը:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

11. Բոլոր պայմանագրային, իրավական և այլ պարտավորությունների մասով թույլ տալ կազմակերպություններին և քաղաքացիներին փոխադարձ համաձայնությամբ հետաձգումները, որոնք չեն կարող ենթարկվել տույժերի կամ տուգանքների կամ ենթարկվել պետական մարմինների կողմից պատժական սանկցիաների կիրառմանը: Որոշ ոլորտների համար պարետատան կողմից կարող են սահմանվել նման հետաձգումների պարտադիր կիրառումներ:

12. Ներկայիս մարտահրավերով պայմանավորված՝ նախաձեռնել պետական արտաքին պարտքի տարեկան մարումների և սպասարկման վճարները սառեցնելու և/կամ վերակառուցելու հարցի քննարկում:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայտարարել ռազմավարական նշանակության մի շարք ապրանքների (ալյուր, շաքարավազ, կարագ, ձեթ, ձու, միս և այլն) գների սառեցման մասին: Ցանկացած փոփոխություն կարող է կատարվել միայն պարետատան թույլտվությամբ: Սույն սահմանափակումը կարող է կիրառվել նաև այլ ապրանքների դեպքում, որոնք անհրաժեշտ են արտակարգ դրության պայմաններում երկրի կենսունակությունը ապահովելու համար: Ռազմավարական նշանակության ապրանքների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

2. Հրատապության դեպքում առաջին անհրաժեշտության ապրանքների ու դեղորայքի վրա կիրառել նորմավորում:

3. Խստորեն վերահսկել պարենային և առաջին անհրաժեշտության ապրանքների գների չհիմնավորված աճը կամ վաճառքը և վերավաճառքը հասանութներից և առևտրի կազմակերպման վայրերից դուրս:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ

4. Գույքագրել ռազմավարական պաշարները, արտերկրից ձեռք բերել այն պարենամթերքը, վառելիքը, դեղորայքը, որն անհրաժեշտ է լինելու առաջիկա վեց ամիսների համար: Նման ձեռքբերումներն իրականացնել ինչպես բյուջեի պահուստային ֆոնդի հաշվին պետական ընկերությունների միջոցով, այնպես էլ ներգրավելով մասնավոր կառույցները և իրենց ֆինանսական հնարավորությունները:

5. Գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի այս փուլում ռեսուրսներն ուղղել գյուղմթերքների, հացահատիկային մշակաբույսերի լայնամասշտաբ արտադրության կազմակերպմանը:

6. Պետական պատվերի միջոցով գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին պատվիրել որոշակի մթերքի արտադրությունը՝ 2020 թվականի ընթացքում երաշխավորված պետական գնման պայմանով:

7. Գարնանացանի ոռոգման ջուրը, պարարտանյութը և սերմերը գյուղացիական տնտեսությունների տրամադրել անհատույց այն գյուղմթերքների արտադրության համար, որոնց մասով առկա է երաշխավորված պետական գնում:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

1. Այն քաղաքացիները, որոնք մինչև արտակարգ դրության հայտարարումը հանդիսացել են գրանցված աշխատող, սակայն արտակարգ դրության պատճառով գտնվում են պարապուրդում, ընտանիքի չաշխատող մեկ անձի հաշվարկով պետական բյուջեից կստանան ամսեկան նվազագույն կենսապահովման գումարի չափով հատուցում: Եթե ընտանիքում մեկից ավելի աշխատող է եղել, ապա ընտանիքի մեկ անձի հաշվարկով գումարը միևնույն է չի կարող գերազանցել վերը նշված չափը:

2. Պետությունը կքննարկի հետագա սոցիալական աջակցության քաղաքականությունը մյուս սոցիալական խավերի նկատմամբ առաջին մեկ ամսվա համապետական կարանտինի ավարտին՝ մինչև մայիսը: Սա կարող է ենթադրել դրանից հետո այնպիսի միջոցառումների իրականացում, ինչպիսիք են՝

- սոցիալական աջակցության շրջանակի ընդլայնումը,
- հանրային հատվածի (ներառյալ ԿԲ) բարձր վարձատրվող աշխատակիցների աշխատավարձերի ժամանակավոր կրճատումը՝ առավելագույն շեմի սահմանմամբ:





ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. Ապահովել հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության շարունակականությունը:

2. Ստեղծել հանրապետական միասնական առցանց հարթակ՝ ապահովել կրթական հաստատություններում հեռավար կրթության միասնական մեխանիզմի կիրառումը:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ

1. Գույքագրել բեռնատար տրանսպորտային ընկերությունների հզորությունները, դրանց ներգրավելով ռազմավարական ապրանքների ներկրմանը:

2. ՈՒսումնասիրել հայկական ոչ պետական օդային փոխադրողների հնարավորությունները արտակարգ իրավիճակում կառավարության պատվերով չարտերային չվերթեր իրականացնելու հնարավորությունը:

3. Դադարեցնել բոլոր տեսակի թռիչքները Հայաստանից և դեպի Հայաստան: Կարիքները հոգալ չարտերային չվերթների միջոցով:

4. Սկսել ազգային փոխադրողի ձևավորման աշխատանքներ՝ օգտվելով ճգնաժամի ընձեռած՝ քիչ ռեսուրսով շարժակազմ ձեռքբերելու հնարավորությունից: Հրաժարվել առկա անհեռանկարային և երկրի շահերից չբխող քաղաքականությունից և նախապատրաստվել նոր ավիացիոն քաղաքականությանը՝ թե ներքին, թե արտաքին կարգավորման առումով:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

1. Մի քանի բուժհաստատություն ամբողջությամբ նախապատրաստել վարակված հիվանդներին ընդունելու համար: Բացառել բազմապրոֆիլ հիվանդանոցներում հիվանդների տեղաբաշխումը:

2. Ներկրել երկրի առաջիկա ամիսների կարիքների բավարարման համար անհրաժեշտ դիմակներ, դեղեր, բժշկական պարագաներ, սարքավորումներ, այդ թվում՝ արհեստական շնչառության սարքեր և այլն:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

1. Զինված ուժերը պետք է անցնեն զորանոցային ռեժիմի: Բացառել բոլոր զինվորականների, այդ թվում՝ պայմանագրային զինծառայողների, սպայական կազմի և սպասարկող աշխատակիցների այցելությունները տուն:

2. Զորամասեր մուտք և ելք պետք է իրականացնեն միայն սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև զենք և զինամթերք տեղափոխող մեքենաները, որոնց վարորդները պետք է բավարարեն ամենախիստ հակահամաճարակային պահանջներին:

3. Ռազմական ոստիկանությունը պետք է խստագույնս հետևի նշված կանոնների պահպանմանը: